

Թիւ 26282
Մարտար 28, 1979

Արժանաշնորհ
Յ. Վարդան Քնյ. Մկրեան
Հովհան Ս. Խաչ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Նիւ Եռք.

Միրելի Տէր Վարդան,


Առացած ենք Հայրութար 6, 1979 թուակիր ձեր նամակը, որով կը
տեղեկացնէք թէ Եկեղեցւոյդ Տիկնաց Միութիւնը Պատույ Ատենապե-
տուհի ընտրած է Տիկին Աստղիկ Քէյիշեանը, եւ Ծխական Խորհուրդի
իր հաւանութիւնը յայտնած է այս ընտրութեան:

Այսու գիրով կը հաստատենք Կառարուած ընտրութիւնը Նկատի ու-
նենալով Տիկին Աստղիկ Քէյիշեանի մատուցած անխոնջ եւ անմնուէր
ծառայութիւնը Ս. Խաչ Եկեղեցւոյ՝ որպէս Տիկնաց Միութեան Ատենա-
պետուհի եւ Եկեղեցւոյ գործոն անդամուհի:

Կ: ՕՐԻՆԵՆՔ Տիկին Ա. Քէյիշեանը եւ անոր կը ցանկանք առաւել
բա՞առող՞ութիւն եւ երկար կեանք:

Միրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՒՄ ԱՐԵԵԴԻՍԿՈՊԱՍ
Առաջնորդ



HOLY CROSS CHURCH OF ARMENIA

ՍՈՒՐԲ ԽԱՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

580 WEST 187 STREET • NEW YORK, N.Y. 10033 • (212) 927-4020

Rev. Fr. Vartan Megherian, Pastor

Փետր. 6, 1979

Գերաշնորհ

S. Թորգոմ Արքեպս. Մանուկեան

Բարեջան Առաջնորդ Հայոց Ամերիկայի

աստ

Գերշ. Սրբազն Հայր,

Եկեղեցւոյս Տիկնանց Միութիւնը, իր Յունուար 80-ի ժողովին մէջ, գրաւոր գոց քուէով եւ առաւելագոյն մեծամասնութեամբ, որոշեց Խրաւիրել Տիկ. Աստղիկ Քէյիշեանը՝ իբրեւ Միութեան Պատւոյ Ատենապետուհի: Տիկ. Քէյիշեան, երկարամեայ եւ անձնուէր ծառայութիւն մատուցած է Ծիեղեցքյ, իբրեւ Միութեան ատենապետուհի եւ գործոն եւ առաջնորդող անդամ:

Մեր Եկեղեցւոյ Տիկնանց Միութիւնը սկիզբէն սովորութիւն ըրած է ընտրել Պատւոյ Ատենապետուհիներ յայտնելու համար զնահատութիւն, ինչպէս նաեւ ատեն ատեն օգտուելու համար անոնց փորձառութենէն իրենց վարչական գործերու վրողութեան մէջ:

Եկեղեցւոյս ծխական Խորհուրդը իր ժողովին մէջ որոշած է հաւանիլ գրաւոր գոց քուէով եղած սոյն ընտրութիւնը:

Այսու կը խնդրենք Ձեր Սրբազնութենէն որ իր օրհնութեան գիրով եւս հաստատէ զայն, ինչպէս եղած է անցեալին մեր նախորդ Պատւոյ Ատենապետուհիներու ընտրութեանց պարագային:

Մատշելով ի համբոյր Ձեր աշխին

մնամ աղօթակից

Վարդապետ Տիգ. Վիրազ
Վարդան Քնյ. Մկրեան
Հովհաննես

Թիւ 26820
Մարտ 29, 1979

Նորին Սուրբ Օծութիւն
Տէր Ցէր Վազգէն Առաջին
Սրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին.

Վեհափառ Տէր,

Տարւոյս Դեկտեմբեր Թին նիւ Եորքի Ս. Խաչ Եկեղեցւոյ օծման
50-ամեակը պիտի նշուի վայել շուքով եւ հանդիսութեամբ:

Այս առթիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւն ու ծխական Խոր-
հուրդը գրաւոր Խնդրանք ներկայացուցած են մեզի՝ դիմելու Զերդ
Սրբութեան որպէս զի բարեհանձիք Օրհնութեան Կոնդակ մը շնորհել
այս պատմական յիշակութեան առթիւ:


Ծրագրուած է պատրաստել Յուշամատեան մը, եւ Զերդ Վեհափառու-
թեան Կոնդակը պիտի տպուի անոր մէջ:

Համեցէք ներփակ գտնել կարգ մը տեղեկութիւններ Ս. Խաչ Եկեղեց-
ւոյ մասին:

Խորապէս շնորհակալ պիտի ըլլանք եթէ Զերդ Սրբութիւնը բարեհանձիք
ընթացք տալ ներկայացուած այս խնդրանքին:

Մատչիմք ի համբոյր Վեհիդ Օծեալ Աջոյն
Խոնարհաբար

ԹՈՐՃՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՎՈՒՄ
Առաջնորդ



HOLY CROSS CHURCH OF ARMENIA

ՍՈՒՐԲ ԻԱԶ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

580 WEST 187 STREET • NEW YORK, N.Y. 10033 • (212) 927-4020

Rev. Fr. Vartan Megherian, Pastor

Փետրուար 28, 1979

Գերաշնորհ

S. Թորգոմ Արքեպս. Մանուկեան
Բարեջան Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Նորք

Գերշ. Սրբազն Հայր,

Ս. Խաչ Եկեղեցւոյս հաստատման եւ օծման 50ամեակն է
այս տարի, եւ մեր ծուխը հանդերձեալ է մեծ շուրջով տօ-
նափմբել այս տարեղարձը, ճաշկերոյթով եւ պատշաճ յայտա-
գրով մր, Շաբաթ, Դեկտ. 8, 1979-ին, Գտվուքմեան Սրահին
մէջ: Մեր տարեղարձի Յանձնակումբի փափաքն է որ Զերդ
Սրբազնութիւնը նախազահէ հանդիսութեանց եւ Դեկտ. 9-ի
Կիրակին ալ Ս. Պատարագ մատուցանէ Եկեղեցւոյս մէջ:

Այս առթիւ, կր ծրագրուի տպագրել տալ Ցուշամատեան
մը, եւ մեր խնդրանքն է որ Զերդ Սրբազնութիւնը, սոյն
գրքոյկին համար, յդէ իր պատզամը եւ նաեւ բարեհանի, յա-
նուն մեր համայնքին, դիմել Ազգին Վեհափառ Հայրապետին
որ շնորհէ մեզի Օրհնութեան սրբատառ Կոնդակ:

Այդ օրերուն, Զեզ մեր մէջ ունենալու մեծ ակընկալութեամբ՝

Մնամ՝ խոնհարաքար

Վարդակական Ժիշ. Արքաց

Վարդան Քհնյ. Մկրեան

Հովհան

OK

Վարդակական -